ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-24/150» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Երևան 04.09.2024թ. ժամը 13:20

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Դանիելյան
անդամներ՝ Հ. Գասպարյան, Ն. Հովհաննիսյան
քարտուղար՝ Զ. Կարապետյան

Հայտերի բացման մասին

(Հ. Դանիելյան)

«ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-24/150» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտերի բացման նիստը տեղի ունեցավ ք. Երևան, Թաիրովի 15, 311 սենյակ հասցեում, 2024 թվականի օգոստոսի 19-ին ժամը 13:20-ին:

1. Տվյալներ հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ

«ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-24/150» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մեկ մասնակիցը՝

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	«ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ	Վայոց ձորի մարզ, Վայք համայնք	mavshin@gmail.com +37477 92 93 94

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տվյալներ՝ ծրարի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

Հայտը պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

3. Տվյալներ՝ բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա էին հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

4. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

5. Մասնակցի առաջարկած գինը

Մասնակցի առաջարկած գինը հետևյալն է՝

ՀՀ դրամ

N	Չափաբաժնի անվանում	Նախահաշվային գինը թվերով (տառերով)/ ՀՀ դրամ/	Մասնակցի անվանումը	Առաջարկվող գինը /ՀՀ դրամ/առանց ԱԱՀ	ԱԱՀ գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ
1	Պատմական արձանների կամ հուշարձանների շինարարական աշխատանքներ	34 157 476 /երեսունչորս միլիոն մեկ հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր յոթանասունվեց/	«ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ	28 415 000	5 683 000	34 098 000

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

6. Տվյալներ՝ ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակցի վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի ներկայացրած փաստաթղթերը՝

1. «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերում անհամապատասխանություններ չհայտնաբերեց:
2. «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ն ներառված չէ՝

• հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

• հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կամակերպման կարգ»-ի 40-րդ կետի 6-րդ ենթակետը՝ 1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած (ընտրված) մասնակից ճանաչել՝ «ՄԱՎՇԻՆ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

7. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել: Հայտերի վերաբերյալ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 25-րդ ենթակետին համապատասխան հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

8. Արդյունքների ամփոփման մասին

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանվում է հետևյալը՝ ընթացակարգին մասնակցել և հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Դանիելյան

Անդամներ՝ _____ Հ. Գասպարյան

_____ Ն. Հովհաննիսյան

Քարտուղար՝ _____ Զ. Կարապետյան